ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
**ՆԱԽԱԳԱՀ**

«9» սեպտեմբերի 2022 թ. № 941-Լ

# ՀՐԱՄԱՆ

## ՏԵՂԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹՈՎ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 376-րդ հոդվածի 1.1-ին մասի 1-ին կետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել տեղական փաստաթղթով պահանջվող տեղեկատվության բովանդակության և ներկայացման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

9/9/2022

X

ԱՐՏՅՈՄ ՍՄԲԱՏՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Signed by: SMBATYAN ARTYOM 3210860416 ԱՐՏՅՈՄ ՍՄԲԱՏՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության պետական
եկամուտների կոմիտեի նախագահի
«9» դեկտեմբերի 2022 թ.
№948-Լ հրամանի

# ԿԱՐԳ
# ՏԵՂԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹՈՎ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կանոնակարգվում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 376-րդ հոդվածի 1.1-ին մասի 1-ին կետով սահմանված տեղական փաստաթղթի բովանդակությունը և ներկայացման պահանջները:

2. Տեղական փաստաթուղթ ներկայացնում են վերահսկվող գործարք ծանուցած ռեզիդենտ հարկ վճարողները և հարկային մարմնի կողմից պահանջ ներկայացվելու դեպքում տեղական փաստաթուղթ ներկայացնում են նաև մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողները (այսուհետ՝ տեղական փաստաթուղթ ներկայացնող կազմակերպություններ):

## 2. ՏԵՂԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

3. Տեղական փաստաթուղթը կազմվում է ազատ ոճով՝ հետևյալ կառուցվածքային բովանդակությամբ.

1) *տեղական փաստաթուղթ ներկայացնող կազմակերպության վերաբերյալ տեղեկություններ, այդ թվում՝ նաև կառուցվածքի.*

ա) տեղական փաստաթուղթ ներկայացնող կազմակերպության ընդհանուր և կառավարման կառուցվածքի նկարագրությունը,

բ) այն ղեկավար անձանց մասին տեղեկություններ, ում տրամադրվում են տեղական փաստաթուղթ ներկայացնող կազմակերպության կառավարման վերաբերյալ հաշվետվությունները, ինչպես նաև այն պետություն(ներ)ը, որտեղ այդ ղեկավար անձինք սովորաբար իրականացնում են իրենց գործունեությունը,

գ) կազմակերպության գործարար ռազմավարության և տնտեսական գործունեության մանրամասն նկարագրությունը, ներառյալ ընթացիկ կամ անմիջապես նախորդ տարում կազմակերպության տնտեսական գործունեության վերակազմակերպման կամ ոչ նյութական ակտիվների փոխանցման գործընթացում ներգրավվածության կամ այդ գործընթացների հնարավոր ազդեցության վերաբերյալ տեղեկություններ,

դ) հիմնական մրցակիցների մասին տեղեկություններ:

*2) Վերահսկվող գործարքների նկարագրությունը.*

ա) վերահսկվող գործարքների նկարագրությունը (օրինակ՝ ծառայությունների ձեռքբերում, ապրանքների գնում, ծառայությունների մատուցում, վարկերի տրամադրում, ֆինանսական ակտիվի օտարում, ոչ նյութական ակտիվների օգտագործման իրավունքի տրամադրում և այլն) և այդպիսի գործարքների իրականացման պայմանների մասին մանրամասները,

բ) վերահսկվող գործարքների կողմերի և դրանց միջև փոխհարաբերությունների վերաբերյալ տեղեկություններ, ներառյալ՝ կողմերի ռեզիդենտության մասին տեղեկատվություն,

գ) յուրաքանչյուր վերահսկվող գործարքի գծով համադրելիության և գործառնական վերլուծությունը (իրականացրած գործառույթներ, օգտագործված ակտիվներ, կրած ռիսկեր), համադրելիության վերլուծության քայլերի հաջորդականության վերաբերյալ տեղեկություններ,

դ) յուրաքանչյուր վերահսկվող գործարքի գծով վերլուծության ենթակա կողմի ընտրության հիմնավորումը,

ե) տրանսֆերային գնագոյացման առավել համապատասխան մեթոդի ընտրության հիմնավորումը,

զ) տրանսֆերային գնագոյացման ընտրված մեթոդաբանության հիմնական գործոնները,

է) ընտրված համադրելի չվերահսկվող գործարքների (ներքին կամ արտաքին) ցանկը և նկարագրությունը, ինչպես նաև համադրելի ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ, որոնք հաշվի են առնվել տրանսֆերային գնագոյացման վերլուծության մեջ և օգտագործված տեղեկության աղբյուրը, համադրելի չվերահսկվող գործարքների ընտրման մեթոդաբանությունը և քայլերի հաջորդականության վերաբերյալ տեղեկություններ,

ը) իրականացված համադրելիության ցանկացած ճշգրտման վերաբերյալ տեղեկություններ, բազմամյա տվյալների օգտագործման հիմնավորումը և պատճառները,

թ) պարզած ձեռքի հեռավորության տիրույթի հաշվարկը,

ժ) տրանսֆերային գնագոյացման մեթոդի կիրառման ժամանակ օգտագործված ֆինանսական տեղեկությունների վերաբերյալ համառոտ նկարագրությունը,

ի) գործող միակողմանի և երկկողմ/բազմակողմ նախնական գնագոյացման պայմանավորվածության (APA) և այլ հարկային իրազեկումների պատճենները, որոնց տեղական փաստաթուղթ ներկայացնող կազմակերպության հարկման նպատակով ռեզիդենտության երկիրը չի մասնակցել, սակայն դրանք առնչվում են վերահսկվող գործարքներին:

*3) Ֆինանսական տեղեկություններ.*

ա) համապատասխան հաշվետու տարվա ֆինանսական հաշվետվությունը,

բ) համադրելիության նպատակով վերլուծության ընթացքում օգտագործված ֆինանսական տվյալների ամփոփ աղյուսակները և այն սկզբնաղբյուրները, որտեղից ձեռք են բերվել այդ տվյալները:

## 3. ՏԵՂԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ

4. Տեղական փաստաթուղթը հարկային մարմին է ներկայացվում վերջինիս ուղարկած գրավոր ծանուցման ստացման ամսաթվից հետո՝ 30 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային տարբերակով՝ հայերեն, անգլերեն կամ ռուսերեն լեզուներով՝ պայմանով, որ անգլերեն կամ ռուսերեն լեզվով փաստաթղթերը հարկային մարմնի պահանջով թարգմանվեն հայերեն և ներկայացվեն հարկային մարմին՝ այդ մասին գրավոր ծանուցումն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում:

5. Հարկային մարմինը կարող է պահանջել լրացուցիչ այլ տեղեկատվություն, որը տեղական փաստաթուղթ ներկայացնող կազմակերպությունը հարկային մարմին է ներկայացնում վերջինիս ուղարկած գրավոր ծանուցման ստացման ամսաթվից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում:

6. Հարկային մարմինը կարող է նաև պահանջել հարցազրույցի անցկացում, որի վերաբերյալ ուղարկված գրավոր ծանուցման ստացման ամսաթվից հետո՝ 5 աշխատանքային

օրվա ընթացքում, տեղական փաստաթուղթ ներկայացնող կազմակերպությունը պետք է գրավոր ներկայացնի հարցազրույցի անցկացման վայրի, ժամկետների և մասնակիցների մասին տեղեկատվություն: